



**«Արդարադատության սկադեմիա» ՊՈԱԿ-ի
Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն
2024թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա վերաբերյալ**



ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏ ՍՊԸ

Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն

Էլ. հասցե՝ consultgmlc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի խորհրդի անդամներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ «Կազմակերպություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԻ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԻ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Կազմակերպության 2023թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթարկվել են աուդիտի մեկ այլ աուդիտորական ընկերության կողմից, ով 10.02.2025թ. աուդիտորական եզրակացությամբ արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել նրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- ✚ հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ✚ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,

- ✦ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- ✦ եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանն դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- ✦ գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

ք. Երևան, 19.12.2025թ.

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊՈ

.Գլխավոր տնօրեն՝



Գոհար Մարգարյան

.Որակավորված աուդիտոր՝

Գայանե Թովմասյան

Բովանդակություն

| | |
|--|----|
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 6 |
| Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | 7 |
| Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն | 8 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն | 9 |
| Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 10 |

Խորհրդի կազմը 2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ

«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման
խորհրդի նախագահն է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արսեն Այվազյանը:

Խորհրդի անդամներն են՝

Արման Թովմասյան

ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական
պալատի դատավոր

Լիլիթ Սարգսյան

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի դատավոր

Անի Դանիելյան

Երևան քաղաքի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության քրեական
դատարանի դատավոր

Արմեն Փանոսյան

ՀՀ Գլխավոր դատախազության ՀՀ
հակակոռուպցիոն կոմիտեում
մինչդատական վարույթի
օրինականության նկատմամբ
հսկողության վարչության պետ

Վահե Ռաֆայելյան

ՀՀ զինվորական դատախազի
տեղակալ

Լիլիթ Գրիգորյան

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ

Մուշեղ Բաբայան

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ

Արշալույս Մինասյան

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երրորդ
վարչության պետ

Գարեգին Բեգոյան

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ընտրական,ինչպես նաև
մասնավոր ոլորտում կոռուպցիոն բնույթի
հանցագործությունների քննության վարչության պետ

Ռոբերտ Ադիլխանյան

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի
քննության գլխավոր վարչության
կիրքեռհանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների
ոլորտում կատարված հանցագործությունների քննության
վարչության պետ

Ռաֆայել Վարդանյան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական
վարչության պետ

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| ‘000 դրամ | Ծնթ. | 31.12.2024թ. | 31.12.2023թ. |
|--|------|------------------|------------------|
| Ակտիվ | | | |
| Հիմնական միջոցներ | 10 | 992,651 | 1,010,013 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | | 992,651 | 1,010,013 |
| Պաշարներ | 11 | 3,934 | 4,668 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 12 | 7,134 | 14,546 |
| Դրամական միջոցներ | 13 | 2,595 | 1,908 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | | 13,663 | 21,122 |
| Ընդամենը ակտիվներ | | 1,006,314 | 1,031,135 |
| Զուտ ակտիվներ և պարտավորություններ | | | |
| Զուտ ակտիվներ | | 245,073 | 250,453 |
| Ընդամենը զուտ ակտիվներ | | 245,073 | 250,453 |
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Հետաձգված եկամուտ | 14 | 730,263 | 748,055 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | | 730,263 | 748,055 |
| Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 15 | 13,254 | 16,118 |
| Պահուստներ | 8 | 17,724 | 16,509 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | | 30,978 | 32,627 |
| Ընդամենը պարտավորություններ | | 761,241 | 780,682 |
| Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ | | 1,006,314 | 1,031,135 |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Կազմակերպության կողմից 2025թ-ի դեկտեմբերի 19-ին:

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ

ՌԵԿՏՈՐ՝

ՍԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՅՄԱՆՈՎ

ԷԼԵՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



**«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

| ‘000 դրամ | Ծնթ. | 2024թ. | 2023թ. |
|---|------|----------------|-----------------|
| «Բյուջեի ֆինանսավորմամբ» և հաճախորտներին մատուցված ծառայություններից հասույթներ | 4 | 247,211 | 286,265 |
| Ընդամենը | | 247,211 | 286,265 |
| Աշխատակիցներին հատուցումներ | | (196,166) | (239,515) |
| Նյութական ծախսեր | | (1,216) | (889) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | | (18,347) | (36,821) |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | | (5,363) | (6,030) |
| Գրասենյակային ծախսեր | 5 | (16,688) | (15,696) |
| Վերապատրաստման ծառայություններ | 6 | (10,624) | (10,576) |
| Այլ ծախսեր | 7 | (4,082) | (4,645) |
| Պահուստներ | 8 | (1,215) | |
| Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս) | | (6,490) | (27,907) |
| Այլ եկամուտ | 9 | 663 | 813 |
| Տարվա արդյունք մինչև հարկումը | | (5,827) | (27,094) |
| Շահութահարկի գծով ծախս | | | (45) |
| Ընդամենը տարվա ֆինանսական արդյունք | | (5,827) | (27,139) |

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ

ՌԵԿՏՈՐ՝



ՍԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱԳՂԱՅԻՆ

ՀԱՄԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
Ջուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

| ‘000 դրամ | | Կուտակված հավելուրդ (պակասորդ) | Ընդամենը Ջուտ ակտիվներ |
|---|--|--------------------------------------|---------------------------|
| Մնացորդն առ 01 հունվարի 2023թ. | | 276,108 | 276,108 |
| Փոփոխություններ զուտ ակտիվներում | | | |
| Տարվա արդյունք | | (27,139) | (27,139) |
| Նախորդ տարիների ֆինանսական արդյունքի ճշգրտում | | 1,484 | 1,484 |
| Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ. | | 250,453 | 250,453 |
| Տարվա արդյունք | | (5,827) | (2,637) |
| Նախորդ տարիների ֆինանսական արդյունքի ճշգրտում | | 447 | 447 |
| Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ. | | 245,073 | 248,263 |

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ

ՌԵԿՏՈՐ՝

ԱՆՏՈՒՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԵՆՏ

ՀԱՍՏԻՑ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



**«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

| ‘000 դրամ | 2024թ | 2023թ |
|--|------------------|------------------|
| Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից | | |
| Ներհոսքեր գործառնական գործունեությունից | | |
| «Բյուջեի ֆինանսավորմամբ» ծառայությունների մատուցումից | 331,042 | 395,680 |
| Գործառնական գործունեությունից այլ ներհոսքեր | | |
| Ընդամենը գործառնական գործունեությունից ներհոսքեր | 331,042 | 395,680 |
| Արտահոսքեր գործառնական գործունեությունից | | |
| Աշխատակիցներին և նրանց անունից դրամական վճարումներ | (195,568) | (171,569) |
| Ծառայությունների ձեռքբերումների դիմաց վճարումներ | (33,342) | (31,793) |
| Նյութերի, ապրանքների և այլ պաշարների ձեռքբերումների դիմաց վճարումներ | (4,265) | (7,665) |
| Գործուղումների հետ կապված վճարումներ | (2,166) | (2,047) |
| Հարկերի և պարտադիր վճարների հետ կապված արտահոսքեր | (39,255) | (102,453) |
| Որպես գործակալ ստացված գումարների գծով պարտավորության մարման հետ կապված վճարումներ | (51,724) | (78,590) |
| Գործառնական գործունեությունից այլ արտահոսքեր | (4,318) | (3,872) |
| Ընդամենը գործառնական գործունեությունից արտահոսքեր | (330,638) | (397,989) |
| Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ | 404 | (2,309) |
| Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից | | |
| Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար բյուջեից պայմանով ստացված գումարների գծով ներհոսքեր | | - |
| Հիմնական միջոցների ձեռքբերման, նորոգման և պահպանման հետ կապված արտահոսքեր | (380) | (189) |
| Ներդրումային գործունեության միջոցով օգտագործված զուտ դրամական միջոցներ | (380) | (189) |
| Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից | | |
| Տոկոսների ստացում | 663 | 809 |
| Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր | 663 | 809 |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում) | 687 | (1,689) |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի | 1,908 | 3,628 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (31) |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի | 2,595 | 1,908 |

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ

ՌԵԿՏՈՐ՝

ՎԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադրվել է ՀՀ կառավարության 2013թ. սեպտեմբերի 13-ի թիվ 990-Ա որոշմամբ և ՀՀ Նախագահի կողմից հաստատված իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի շրջանակում: Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության կառավարությունն է: Հիմնադրի անունից հանդես եկող պետական լիազոր մարմինն Արդարադատության նախարարությունն է: Կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է: Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Կազմակերպությունն իր գործունեությունն սկսել է 2014թ-ի հունվարի մեկից:

Կազմակերպության գործունեության կանոնակարգման համար 2013թ-ի մայիսի 2-ին ընդունվել է «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքը համաձայն որի Կազմակերպությունը՝

1. կազմակերպում և անցկացնում է որոկավորման ստուգման արդյունքներով դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը,
2. կազմակերպում և անցկացնում է դատավորների, դատախազների, Կազմակերպությունում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում գտնվող անձանց վերապատրաստումը,
3. կազմակերպում և անցկացնում է դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստումը,
4. կազմակերպում է դատավորների, դատախազների և դատական կարգադրիչների հատուկ ուսուցումը՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով,
5. իր իրավասության սահմաններում կնքում է պայմանագրեր ՀՀ և օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, համագործակցում է օտարերկրյա կազմակերպությունների հետ, անդամակցում միջազգային կառույցներին,
6. կրթական ծրագրերի իրականացման համար մշակում է ուսումնամեթոդական նյութեր և կատարում է դրանց մշակման համար անհրաժեշտ հետազոտություններ:

Կազմակերպությունը կառավարվում և ղեկավարվում է ՀՀ օրենսդրությանը և Կանոնադրությանը համապատասխան, հիմնադրի, Կազմակերպության կառավարման խորհրդի և Կազմակերպության ռեկտորի գործառույթների իրականացմամբ:

Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը կառավարման խորհուրդն է, որը կազմված է 13 (տասներեք) անդամներից:

Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0054, Փիրումյանների փողոց 9:

2024 թվականին աշխատողների միջին թվաքանակը կազմել է 45 աշխատակից, (2023թ-ին՝ 42 աշխատակից):

Ակադեմիայի կառավարումն իրականացնում է Ակադեմիայի կառավարման խորհուրդը՝ «Արդարադատության ակադեմիայի» մասին ՀՀ օրենքով նախատեսված կարգով:

11-31 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտներին (այսուհետ՝ ՀՀՀՀՀՀՀ) համապատասխան:

2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը հանդիսանում է գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս է արտացոլում Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 Անընդհատություն

Կազմակերպությունն իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է անընդհատության հիմունքով:

2.5 Գնահատումների և դատողությունների կիրառում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՀՀՀՀՀՀՀ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար դատողություններն անելիս ղեկավարությունը հաշվի է առել համանման և կապակցված հարցերին առնչվող հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներն ու մոտեցումները:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հիմնական միջոցների սահմանումը

Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են,՝

- 1) որոնք առկա են ապրանքների կամ ծառայությունների արտադրության (մատուցման) կամ մատակարարման, այլ կողմերին վարձակալության տալու կամ վարչական նպատակներով շարունակական կամ պարբերաբար օգտագործելու համար,
- 2) որոնք ակնկալվում է օգտագործել ավելի քան մեկ տարվա ընթացքում,

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

- 3) որոնց արժեքը սկզբնական ճանաչման պահին գերազանցում է հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող լիազոր մարմնի կողմից սահմանված չափը, բացառությամբ համակարգչային տեխնիկայի, գրասենյակային կահույքի և հեռախոսների:

Հիմնական միջոցների վերաբերյալ ըստ դասերի բացահայտումներ իրականացնելու համար հիմնական միջոցները դասակարգվում են հետևյալ կերպ՝

- ա) հողամասեր
- բ) շենքեր և շինություններ (կառուցվածքներ)
- գ) փոխանցող հարմարանքներ
- դ) մեքենաներ և սարքավորումներ
- ե) տրանսպորտային միջոցներ
- զ) գրասենյակային և տնտեսական գույք, գործիքներ
- է) այլ հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների ճանաչումը

Հիմնական միջոցների միավորի արժեքը ճանաչվում է որպես ակտիվ, երբ՝

- 1) հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը կհոսեն դեպի կազմակերպություն, և
- 2) միավորի սկզբնական արժեքը կամ իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Այն հիմնական միջոցների միավորները, որոնց օգտագործումից Կազմակերպությունը տնտեսական օգուտների կամ օգտակար պոտենցիալի ներհոսք չի ակնկալում, չեն ճանաչվում:

Սկզբնավորման և հետագա ծախսումներ

Հիմնական միջոցի միավորի վրա նոր մասի (բաղկացուցչի) ավելացման, կամ հիմնական միջոցի միավորի մասի (բաղկացուցչի) փոխարինման ծախսումներն ավելացվում են հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), եթե այդ ծախսումները բավարարում են հաշվապահական հաշվառման քաղաքականության «Հիմնական միջոցների ճանաչումը» պարագրաֆում նշված ճանաչման չափանիշներին: Հիմնական միջոցի միավորի փոխարինված մասերը (բաղկացուցիչները) ենթակա են ապաճանաչման՝ համաձայն հաշվապահական հաշվառման քաղաքականության «Հիմնական միջոցների ապաճանաչումը» պարագրաֆում սահմանված մոտեցումների:

Հիմնական միջոցների չափումը ճանաչման պահին

Հիմնական միջոցի միավորը, որը կարող է ճանաչվել որպես ակտիվ, չափվում է իր սկզբնական արժեքով:

Հիմնական միջոցների չափումը ճանաչումից հետո

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչվելուց հետո չափվում է սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը, բացառությամբ հողամասերի և շենքերի:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հողամասերը և շենքերը որպես ակտիվ ճանաչվելուց հետո պետք է հաշվառվեն վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրանց իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը (շենքերի մասով):

Հողամասերի և շենքերի վերագնահատման անցկացման ժամկետները և մեթոդաբանությունը սահմանում է հաշվապահական հաշվառումը կարգավորող լիազոր մարմինը:

Հիմնական միջոցների մաշվածություն

Հիմնական միջոցի միավորը մաշեցվում է իր օգտակար ծառայության ընթացքում: Հիմնական միջոցի միավորի մաշվող գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Մաշվող գումարը ակտիվի սկզբնական արժեքն է կամ դրան փոխարինող այլ գումարը:

Օգտակար ծառայությունը՝

- 1) նոր հիմնական միջոցի համար՝ դրա նորմատիվային օգտակար ծառայությունն է.
- 2) նախկինում օգտագործված (հին) հիմնական միջոցի համար՝ մնացորդային նորմատիվային օգտակար ծառայությունն է, որը նորմատիվային օգտակար ծառայության այն մասն է, որի ընթացքում ակնկալվում է որ այդ հիմնական միջոցը կօգտագործվի:

Նորմատիվային օգտակար ծառայությունը սահմանում է հաշվապահական հաշվառումը կարգավորող լիազոր մարմինը: Նորմատիվային օգտակար ծառայությունը այն ժամանակաշրջանն է, որի ընթացքում նոր հիմնական միջոցները մաշեցվելու են:

Հիմնական միջոցի մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով, որը մաշվածության հավասարաչափ բաշխումն է դրա օգտակար ծառայության ընթացքում:

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է հավելուրդում կամ պակասուրդում, բացառությամբ, եթե այն ներառվում է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

| | |
|--|---------------|
| Շենքեր և շինություններ | 80 - 120 տարի |
| Կառուցվածքներ և փոխանցող հարմարանքներ | 20 - 50 տարի |
| Մեքենաներ, սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ | 10 - 30 տարի |
| Արտադրական, տնտեսական գույք և այլ | 5 - 100 տարի |

Հիմնական միջոցների ապաճանաչումը

Հիմնական միջոցների միավորի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է (դուրս է գրվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից), երբ.

- 1) այն օտարվում է
- 2) այն ընդմիջտ դուրս է հանվում օգտագործումից, և ապագա ոչ մի տնտեսական օգուտ կամ օգտակար պոտենցիալ դրա օգտագործումից կամ օտարումից չի ակնկալվում:

Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը ներառվում է հավելուրդում կամ պակասուրդում, երբ այդ միավորը ապաճանաչվում է : Այդպիսի օգուտները չեն դասակարգվում որպես հասույթ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

3.2 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվների սահմանումը

Ոչ նյութական ակտիվը ֆիզիկական սուբստանցիայից զուրկ որոշելի (իդենտիֆիկացվող) ոչ դրամային ակտիվ է, որն առկա է ավելի քան մեկ տարվա ընթացքում շարունակական կամ պարբերաբար օգտագործելու համար:

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է որպես ակտիվ, երբ՝

- 1) հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը կհոսեն կազմակերպություն,
- 2) ակտիվի սկզբնական արժեքը կամ իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել,
- 3) ակտիվը ոչ նյութական միավորի գծով կազմակերպության ներսում կատարված ծախսումների արդյունք չէ:

Կազմակերպությունը գնահատում է ակնկալվող ապագա տնտեսական օգուտների կամ օգտակար պոտենցիալի հավանականությունը՝ կիրառելով խելամիտ և հիմնավորված ենթադրություններ, որոնք արտացոլում են ղեկավարության՝ այն տնտեսական պայմանների ամբողջական կազմի լավագույն գնահատականը, որոնք առկա կլինեն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Սկզբնական չափում

Ոչ նյութական ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով:

Ոչ նյութական ակտիվների չափումը ճանաչումից հետո

Ոչ նյութական ակտիվը որպես ակտիվ ճանաչվելուց հետո չափվում է սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան

Բոլոր ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են իրենց օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարը պարբերական հիմունքով բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Ամորտիզացվող գումարը ակտիվի սկզբնական արժեքն է:

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի ամորտիզացիայի գումարը ճանաչվում է հավելուրդում կամ պակասուրդում, բացառությամբ, եթե այն ներառվում է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Օգտակար ծառայություն

Ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը այն ժամանակաշրջանն է, որի ընթացքում կազմակերպությունը ակնկալում է օգտագործել ակտիվը:

Պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքներից բխող ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը չի գերազանցում պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքների ժամկետը, սակայն կարող է լինել ավելի կարճ՝ կախված այն ժամկետից, որի ընթացքում կազմակերպությունն ակնկալում է օգտագործել ակտիվը: Եթե պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքները փոխանցվում են սահմանափակ ժամկետով, որը կարող է նորացվել, ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը ներառում է նորացված ժամկետը (ժամկետները), եթե առկա է վկայություն, որ նորացումը կազմակերպության կողմից կիրականացվի առանց նշանակալի ծախսումների:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունը գնահատվում է այն պահին, երբ դրանք դառնում են մատչելի օգտագործման համար: Եթե կազմակերպությունն անկարող է կատարել ոչ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Նյութական ակտիվի օգտակար ծառայության արժանահավատ գնահատում, օգտակար ծառայությունը համարվում է տասը տարի:

Ամորտիզացիայի ժամանակաշրջան և ամորտիզացիայի մեթոդ

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան սկսում է հաշվարկվել, երբ ոչ նյութական ակտիվը մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ամորտիզացիայի հաշվարկումը դադարեցվում է, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է գծային մեթոդով:

Ամորտիզացիայի ժամկետի վերանայում

Ոչ նյութական ակտիվի օգտագործման փոփոխությունները, տեխնոլոգիական բարելավումները, ինչպես նաև շուկայական գների փոփոխությունները կարող են վկայել, որ ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը ամենավերջին տարեկան հաշվետու ժամանակաշրջանից սկսած փոփոխվել է: Եթե առկա են նման հայտանիշներ, կազմակերպությունը վերանայում է իր նախորդ գնահատումները և, եթե ընթացիկ ակնկալիքները տարբերվում են, փոփոխում է օգտակար ծառայությունը: Օգտակար ծառայության փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություն (տես «Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում, նախորդ ժամանակաշրջանի սխալների ուղղումներ» բաժինները):

Ոչ նյութական ակտիվների ապաճանաչում

Ոչ նյութական ակտիվը ապաճանաչվում է (դուրս է գրվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից), երբ.

- 1) այն օտարվում է (ներառյալ չփոխանակավող գործարքի միջոցով օտարումը), կամ՝
- 2) դրա օգտագործումից կամ օտարումից չի ակնկալվում ապագա տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ:

Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը ներառվում է հավելուրդում կամ պակասուրդում, երբ այդ ակտիվը ապաճանաչվում է: Այդպիսի օգուտները չեն դասակարգվում որպես հասույթ:

Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից օգուտը կամ վնասը որոշում է որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն: Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

| | |
|---------------------------|-------------|
| Համակարգչային ծրագրեր | 3 - 10 տարի |
| Լիցենզիաներ և արտոնագրեր | 3 - 10 տարի |
| Այլ ոչ նյութական ակտիվներ | 3 - 10 տարի |

3.3 ՊԱՇԱՐՆԵՐ

Պաշարների սահմանումը

Պաշարները այն ակտիվներն են, որոնք՝

- 1) հումքի կամ նյութերի ձևով են՝ արտադրության ընթացքում օգտագործելու համար.
- 2) արտահայտված են հումքի կամ նյութերի ձևով՝ ծառայություններ մատուցելու ընթացքում օգտագործելու կամ բաշխելու համար.

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Պաշարների ճանաչումը

Պաշարը ճանաչվում է որպես ակտիվ, երբ՝

- 1) հավանական է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը կհոսեն դեպի կազմակերպություն, և
- 2) դրա սկզբնական արժեքը կամ իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Այն պաշարները, որոնց օգտագործումից կազմակերպությունը տնտեսական օգուտների կամ օգտակար պոտենցիալի ներհոսք չի ակնկալում, չեն ճանաչվում:

Պաշարների չափումը ճանաչման պահին

Պաշարները սկզբնապես չափվում են իրենց սկզբնական արժեքով (ինքնարժեքով):

Եթե պաշարները ձեռք են բերվել չփոխանակվող գործարքով, դրանց սկզբնական արժեքը (ինքնարժեքը) չափվում է այդ պաշարների ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքով:

Պաշարների սկզբնական արժեքը (ինքնարժեքը) ներառում է՝

- 1) պաշարների ձեռքբերման ծախսումները.
- 2) պաշարների վերամշակման ծախսումները, և
- 3) պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Պաշարների ձեռքբերման ծախսումները

Պաշարների ձեռքբերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են կազմակերպությանն ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, հումքի և նյութերի ձեռքբերման հետ: Ձեռք բերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ ճշգրտումները հանվում են:

Վճարման նորմալ պայմաններում ձեռքբերման գնի և վճարված գումարի տարբերությունը (ձեռքբերման դիմաց վճարումը հետաձգելու հետևանքով ավել վճարված գումարները) ճանաչվում է որպես տոկոսային ծախս ֆինանսավորման ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում և չի ավելացվում պաշարների սկզբնական արժեքին (ինքնարժեքին):

Ծառայություններ մատուցող կազմակերպությունների պաշարների սկզբնական արժեքը (ինքնարժեքը)

Ծառայություն մատուցող կազմակերպության դեպքում պաշարները ներառում են ծառայության ծախսումները, որոնց գծով կազմակերպությունը դեռևս չի ճանաչել համապատասխան հասույթը (հասույթի ճանաչման վերաբերյալ մոտեցումները ներկայացված են «Ծառայությունների մատուցումից հասույթի ճանաչումը» ենթաբաժնում): Նման պաշարները չափվում են իրենց արտադրական ծախսումներով: Այդ ծախսումները բաղկացած են անմիջականորեն ծառայություն մատուցելու գործում զբաղված անձնակազմի աշխատուժի ծախսումներից, ներառյալ կառավարող տեխնիկական անձնակազմը, ինչպես նաև բաշխման ենթակա վերադիր ծախսումներից: Ծառայություն մատուցելու գործում չզբաղված անձնակազմի աշխատուժի ծախսումները չեն ներառվում պաշարների ինքնարժեքում: Բաշխման (իրացման) և ընդհանուր վարչական անձնակազմի հետ կապված աշխատուժի և այլ ծախսումները չեն ներառվում պաշարների սկզբնական արժեքում (ինքնարժեքում), այլ ճանաչվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակաշրջանում:

11-31 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Պաշարների հաշվառման բանաձևերը

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված և արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի սկզբնական արժեքը (ինքնարժեքը) որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների արժեքը որոշվում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևով:

Պաշարների չափումը ճանաչումից հետո

Պաշարները որպես ակտիվ ճանաչվելուց հետո չափվում են իրենց սկզբնական արժեքով (ինքնարժեքով):

Պաշարների ծախս ճանաչումը

Պաշարների վաճառքի, փոխանակման կամ բաշխման դեպքում դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը: Եթե պաշարների հետ կապված առկա չէ համապատասխան հասույթ, ապա ծախսը ճանաչվում է ապրանքները բաշխելիս կամ համապատասխան ծառայությունը մատուցելիս:

Պաշարների գծով բոլոր կորուստները (պակասորդներ, փչացումներ և այլն) ճանաչվում են որպես ծախս դրանց տեղի ունենալու (հայտնաբերելու) ժամանակաշրջանում:

3.4 ՓՈԽԱՆԱԿՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

Փոխանակվող գործարքների սահմանումը

Փոխանակվող գործարքները այնպիսի գործարքներ են, որոնց դեպքում մի կազմակերպություն ստանում է ակտիվներ կամ ծառայություններ, կամ մարում է պարտավորություններ և դրանց դիմաց, որպես փոխանակում, մեկ այլ կազմակերպությանն ուղղակիորեն տալիս է դրանց մոտավորապես հավասար արժեքը (հիմնականում դրամական միջոցների, ապրանքների, ծառայությունների կամ ակտիվների օգտագործման տեսքով):

Հասույթի սահմանումը

Հասույթը հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների կամ օգտակար պոտենցիալի համախառն ներհոսքն է, որը հանգեցնում է զուտ ակտիվների (սեփական կապիտալի) աճի, բացառությամբ սեփականատերերի կողմից ներդրումների հետևանքով զուտ ակտիվների (սեփական կապիտալի) աճի:

Հասույթի չափումը

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է առնում կազմակերպության կողմից տրամադրվող ցանկացած առևտրական զեղչերի, ժամկետից շուտ վճարման զեղչերի և քանակային զիջումների գումարները:

Ծառայությունների մատուցումից հասույթի ճանաչումը

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

- 1) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- 2) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը կհոսեն դեպի կազմակերպություն,
- 3) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը,

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

4) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Գործարքի ավարտվածության աստիճանը որոշելու մեթոդ է հանդիսանում տվյալ ամսաթվի դրությամբ կատարված ծախսումների և գործարքի գնահատված ընդհանուր ծախսումների հարաբերակցությունը:

Գործնական նկատառումներից ելնելով, երբ ծառայությունները տվյալ ժամանակաշրջանի ընթացքում մատուցվել են անորոշ քանակի գործողությունների տեսքով, հասույթները նշված ժամանակաշրջանի ընթացքում ճանաչվում են գծային մեթոդով, եթե չկա որևէ այլ մեթոդ, որով ավելի լավ է ներկայացվում ավարտվածության աստիճանը:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսումների չափով, որոնք կփոխհատուցվեն:

Երբ գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, և հավանական չէ, որ կրած ծախսումները կփոխհատուցվեն, հասույթը չի ճանաչվում, իսկ կատարված ծախսումները ճանաչվում են որպես ծախս: Երբ անորոշությունները, որոնք խոչընդոտում էին գործարքի արդյունքների արժանահավատորեն գնահատմանը, այլևս գոյություն չունեն, հասույթը ճանաչվում է երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվում են 1-ին պարագրաֆում նշված բոլոր պայմանները:

3.5 ՆՎԵՐՆԵՐ և ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԱՊՐԱՆՔՆԵՐ

Նվերներն ու նվիրատվությունները այլ կազմակերպության ակտիվների (ներառյալ՝ դրամական միջոցներ կամ այլ դրամային ակտիվներ, անհատույց ապրանքներ և ծառայություններ) կամավոր փոխանցումներն (տրանսֆերտներն) են, որոնք, սովորաբար, կատարվում են առանց որևէ ամրագրված դրույթների:

Համաձայն ՀՀՀՀՍ-ի «Չփոխանակվող գործարքներից հասույթ» 26-րդ բաժնի փոխանցվող ակտիվների գծով ամրագրված դրույթները օրենքներով կամ կարգավորող օրենսդրությամբ կամ պարտավորեցնող համաձայնությամբ սահմանված դրույթներ են, որոնք կիրառվում են հաշվետու կազմակերպությունից դուրս կազմակերպությունների կողմից փոխանցվող ակտիվի օգտագործման նկատմամբ:

Նվերներն ու նվիրատվությունները (բացառությամբ անհատույց ծառայությունները) ճանաչվում են որպես ակտիվներ և հասույթ, երբ հավանական է, որ ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը կհոսի դեպի կազմակերպություն, և ակտիվի իրական արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Սկզբնապես ճանաչման պահին նվերներն ու նվիրատվությունները՝ ներառյալ անհատույց ապրանքները, չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ՝ իրենց իրական արժեքով, որը կարող է հավաստվել՝ վկայակոչելով գործող շուկան, կամ՝ գնահատման միջոցով:

Տրանսֆերտներ

Տրանսֆերտները չփոխանակվող գործարքներից ապագա տնտեսական օգուտների կամ օգտակար պոտենցիալի ներհոսքն է, բացառությամբ հարկերը: Տրանսֆերտները ներառում են դրամաշնորհներ, պարտքի ներումներ, տույժեր և տուգանքներ, ժառանգություններ, նվերներ, նվիրատվություններ, անհատույց ապրանքներ և ծառայություններ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

3.6 ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

Պահուստի սահմանումը

Պահուստը անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն է:

Պարտավորությունը կազմակերպության ներկա պարտականությունն է՝ որպես կատարված (անցյալ) դեպքերի արդյունք, որի մարումն ակնկալվում է, որ կհանգեցնի կազմակերպությունից տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ մարմնավորող միջոցների արտահոսքի:

Պահուստի ճանաչումը

Պահուստ ճանաչվում է, երբ՝

- 1) կազմակերպությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք,
- 2) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ մարմնավորող միջոցների արտահոսք, և
- 3) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Պահուստների չափումը

Պահուստը չափվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատա-կանով: Լավագույն գնահատականն այն գումարն է, որը կազմակերպությունը խելամտորեն կվճարեր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ այդ պարտականությունը մարելու կամ այդ պահին այն երրորդ կողմին փոխանցելու համար:

3.7 ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների կողմից մատուցված ծառայության դիմաց կազմակերպության կողմից ցանկացած ձևով տրվող հատուցումներն են: Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

- 1) աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները,
- 2) հետաշխատանքային հատուցումները,
- 3) ազատման նպաստները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները աշխատակիցների այն հատուցումներն են (բացի ազատման նպաստներից), որոնք ամբողջությամբ ենթակա են վճարման այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը: Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են՝

- 1) աշխատավարձերը,
- 2) կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները), երբ ակնկալվում է, որ բացակայությունները տեղի կունենան այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան աշխատանքային ծառայությունը,
- 3) արդյունքների հետ կապված պարգևավճարները, որոնք ենթակա են վճարման այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունը, և
- 4) ոչ դրամային հատուցումները (օրինակ՝ բուժսպասարկում, բնակարանով և ավտոմեքենայով ապահովում, անվճար կամ մասնակի վճարումով ապրանքների կամ ծառայությունների տրամադրում) ընթացիկ ժամանակաշրջանում աշխատող աշխատակիցների համար:

11-31 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների ճանաչումը և չափումը

Աշխատակիցների բոլոր կարճաժամկետ հատուցումները

Երբ աշխատակիցը հաշվառման ժամանակաշրջանի ընթացքում կազմակերպությանը մատուցել է ծառայություն, կազմակերպությունը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

- 1) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, կազմակերպությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների նվազեցման կամ դրամական միջոցների վերադարձի. և
- 2) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ:

Կարճաժամկետ փոխհատուցելի բացակայություններ

Կազմակերպությունը ճանաչում է փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների ակնկալվող ծախսումները համաձայն Աշխատակիցների բոլոր կարճաժամկետ հատուցումները պարագրաֆի, հետևյալ կերպ՝

- 1) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների(օրինակ՝ տարեկան վճարովի արձակուրդները) դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և
- 2) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների (օրինակ՝ հղիության, ծննդաբերության և երեխայի՝ մինչև որոշակի տարիք հասնելը լրիվ կամ մասնակի վճարմամբ արձակուրդները) դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Կուտակվող փոխհատուցելի բացակայությունները նրանք են, որոնք փոխադրվում են հետագա ժամանակաշրջաններ և կարող են օգտագործվել այդ ժամանակաշրջաններում, եթե ընթացիկ ժամանակաշրջանի իրավունքները ամբողջությամբ չեն օգտագործվել:

Ազատման նպաստներ

Ազատման նպաստները աշխատակիցների այն հատուցումներն են, որոնք ենթակա են վճարման որպես հետևանք՝

- 1) կազմակերպության որոշման՝ աշխատանքից ազատել աշխատակիցներին մինչև թոշակի անցնելու ընդունված ժամկետը, կամ
- 2) աշխատակցի որոշման՝ աշխատակիցների թվաքանակի կրճատման դեպքում կամավոր ազատվել՝ փոխարենը ստանալով այդ նպաստները:

3.8 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Կազմակերպության ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Կազմակերպության բոլոր ֆինանսական գործիքների ներկայացումը
- Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են Կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Կազմակերպությունը դառնում է ֆինանսական գործիքների պայմանագրային կաղմ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների) նախնական ճանաչման ժամանակ համապատասխանաբար գումարվում կամ պակասեցվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից: Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսերը անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

- Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը

- Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացված արժեքով, այն դեպքում, երբ.

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու համար, և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է ապահովել պայմանագրային դրամական միջոցների հոսքեր և պահվում են վաճառքի նպատակով, և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքեր, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Մնացած բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն ներառվում վերոնշյալների մեջ, ինքնստիճան չափվում են իրական արժեքով շահույթ կամ վնասի միջոցով (ԻԱՉՇՎ):

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող

Բոլոր ֆինանսական պարտավորությունները, սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կամ ԻԱՉՇՎ մեթոդը: Այնուամենայնիվ, ֆինանսական պարտավորությունները, որոնք առաջանում են, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի համապատասխանում ապաճանաչմանը կամ երբ շարունակական ներգրավվածության մոտեցում է կիրառվում և Կազմակերպության կողմից թողարկված ֆինանսական երաշխիքի պայմանագրերը չափվում են ստորև նշված հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխան:

Ֆինանսական պարտավորություններ (ԻԱՉՇՎ) ներկայացվող

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՉՇՎ ներկայացվող, երբ ֆինանսական պարտավորությունը հանդիսանում է .

ա) ձեռնարկատիրական գործունեության միավորման մեջ ձեռք բերողի պայմանական հատուցումը

բ) պահվում է առևտրային նպատակով կամ

գ) այն նախատեսված է ԻԱՉՇՎ-ի համար:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրային նպատակով պահվող, եթե.

- այն բացառապես ձեռք է բերվել մոտ ապագայում վերավաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ այն հանդիսանում է իդենտիֆիկացվող ֆինանսական գործիքների մի մաս, որը Կազմակերպությունը միասին է կառավարում և ունի կարճաժամկետ շահույթ ստանալու փաստ:
- այն ածանցյալ գործիք է, բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք հանդիսանում են ֆինանսական երաշխիքի պայմանագրեր կան նախանշված արդյունավետ հեջավորման գործիքներից:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը միայն երբ ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները սպառվում են կամ երբ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և էականորեն ակտիվի սեփականության բոլոր ռիսկերն ու հատույցները մեկ այլ կազմակերպության:

Եթե Կազմակերպությունը ոչ փոխանցում է, և ոչ էլ պահպանում սեփականության հետ կապված էականորեն բոլոր ռիսկերն ու հատույցները և շարունակում է վերահսկել փոխանցված ակտիվը, ապա Կազմակերպությունը ճանաչում է իր հետաքրքրությունը ակտիվի հանդեպ և այն գումարների հետ կապված պարտավորությունը, որն այն կարող է վճարել: Եթե Կազմակերպությունը կրում է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերը և հատույցները, ապա Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ճանաչում է ստացված օգուտների գրավադրված փոխառությունները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի ապաճանաչման ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի և հատուցված կամ հատուցվող գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Ի հավելում, պարտքային գործիքի մեջ ներդրման, դասակարգված որպես «Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող» (ԻԱՉՇՎ), ապաճանաչման ժամանակ ներդրումների վերազնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը վերադասակարգվում է շահույթ կամ վնասում: Եվ հակառակը, բաժնային գործիքի մեջ ներդրման ապաճանաչման ժամանակ, որը սկզբնական ճանաչման ժամանակ

11-31 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Կազմակերպությունն ընտրել է ԻԱՉՇՎ մեթոդը ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը չի վերադասակարգվում շահույթ կամ վնասում, այլ տեղափոխվում է կուտակված շահույթ կամ վնաս:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը միայն և միայն այն ժամանակ, երբ Կազմակերպությունը ֆինանսական գործիքի պարտավորություններից ազատվել է, չեղարկվել է կամ սպառվել է պայմանագրային պարտավորությունը: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության մնացորդային արժեքի և փոխհատուցված կամ փոխհատուցվող գումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում:

Երբ Կազմակերպությունն առկա վարկատուի հետ մեկ պարտքային գործիքը փոխանակում է մյուսի հետ՝ զգալիորեն տարբեր պայմաններով, ապա այսպիսի փոխանակումը դիտարկվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նույն կերպ, Կազմակերպությունն առկա պարտավորության կամ դրա մի մասի էական պայմանների փոփոխությունը դիտարկում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանները էական տարբեր են համարվում, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքը, ներառյալ բոլոր կատարված վճարումների և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված և ստացված վճարումների տարբերությունը, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքից: Եթե փոփոխությունը էական չէ մինչև փոփոխությունը պարտավորության մնացորդային արժեքի և փոփոխությունից հետո դրամական հոսքերի ներկա արժեքի միջև, ապա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այլ եկամուտների կամ վնասների հետ մեկտեղ, որպես փոփոխությունից շահույթ կամ վնաս:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկումից կորուստները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ ԻԱՉԱՀԱ-ով, Կազմակերպությունը ճանաչում է հետևյալ դեպքերում՝ սպասվելիք վարկային կորուստների, ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի պայմանագրերի մասով:

«Դեբիտորական պարտքերի սպասվող կորուստների» (ԴՊՍԿ) գումարները, սկսած համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին թարմացվում են՝ վարկային ռիսկում փոփոխություններն արտացոլելու համար:

Կազմակերպությունը միշտ ճանաչում է ԴՊՍԿ-ը առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի համար: Այս ֆինանսական ակտիվներից սպասվող վարկային կորուստները գնահատվում են՝ օգտագործելով պահուստի հաշվարկման համար մշակված համապատասխան մատրիցան՝ հիմնվելով Կազմակերպության պատմական վարկային կորուստի փորձի վրա, ճշգրտված պարտապանների համար հատուկ գործոններով, ընդհանուր տնտեսական պայմաններով և ընթացիկ, ինչպես նաև հաշվետու ամսաթվի պայմաններին կանխատեսվող ուղղության գնահատմամբ, ներառյալ երբ կիրառելի է դրամի արժեքը ժամանակի մեջ:

Մյուս բոլոր ֆինանսական գործիքների համար Կազմակերպությունը ճանաչում է ԴՊՍԿ-ն, երբ տեղի է ունեցել սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճ:

Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալի չի բարձրացել սկզբնական ճանաչումից ի վեր, ապա Կազմակերպությունն այդ ֆինանսական գործիքից կորուստի պահուստը չափում է 12 ամսվա ԴՊՍԿ-ի համարժեք գումարով:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է սպասվող վարկային կորուստներ ֆինանսական գործիքիամբողջ կյանքի ընթացքում հնարավոր դեֆոլտի արդյունքում: Եվ հակառակը, 12 ամսվա ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է կյանքի ընթացքում ԴՊՍԿ-ի այն մասը, որը սպասվում է որ կառաջանա ֆինանսական գործիքի հնարավոր դեֆոլտից հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 17-ում:

3.9 ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Դեքիտորական պարտքերի հասկացությունը

Դեքիտորական պարտք են հանդիսանում այն ֆինանսական ակտիվները, որոնք ստեղծվում են Կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին (դեքիտորին) ապրանքներ կամ ծառայություններ տրամադրելու միջոցով: Դեքիտորական պարտքերը ներառվում են ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների կատեգորիայում:

Որպես դեքիտորական պարտք են դասակարգվում նաև տույժերից և տուգանքներից, նյութական վնասի փոխհատուցումից ստացվելիք գումարները, ինչպես նաև այլ ստացման ենթակա գումարները՝ բացառությամբ տրամադրված վարկերից և փոխառություններից:

Դեքիտորական պարտքերի ճանաչումը

Դեքիտորական պարտքը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Կազմակերպությունը դառնում է գործարքի պայմանագրային կողմ, այսինքն՝ երբ առաջանում է պահանջի իրավունքը:

Դեքիտորական պարտքերի սկզբնական չափումը

Դեքիտորական պարտքը սկզբնական ճանաչման պահին չափվում է գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են դեքիտորական պարտքի առաջացմանը):

Դեքիտորական պարտքերի հետագա չափումը

Ընթացիկ դեքիտորական պարտքը սկզբնական ճանաչումից հետո չափվում է այն արժեքով, որով նա չափվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած դեքիտորական պարտքի ցանկացած մարում:

Ոչ ընթացիկ դեքիտորական պարտքը սկզբնական ճանաչումից հետո չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Դեքիտորական պարտքերի ապաճանաչումը

Դեքիտորական պարտքը ապաճանաչվում է (դուրս է գրվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից) այն դեպքում, երբ՝

- 1) դեքիտորական պարտքից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ մարվում են.
- 2) կազմակերպությունը այլ կողմին է փոխանցում դեքիտորական պարտքի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները. կամ
- 3) կազմակերպությունը, չնայած պահպանում է սեփականության հետ կապված որոշ նշանակալի ռիսկեր ու հատույցներ, դեքիտորական պարտքի նկատմամբ վերահսկողությունը փոխանցել է մեկ այլ կողմի:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

3.10 ԿՐԵՂԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Կրեդիտորական պարտքերի հասկացությունը

Կրեդիտորական պարտք են հանդիսանում այն ֆինանսական պարտավորությունները, որոնք առաջանում են Կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտատիրոջից (կրեդիտորից) ապրանքներ կամ ծառայություններ գնելու միջոցով: Կրեդիտորական պարտքերը ներառվում են ամորտիզացվող արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ կատեգորիայում:

Որպես կրեդիտորական պարտք են դասակարգվում նաև տույժերի և տուգանքների, նյութական վնասի փոխհատուցման, ինչպես նաև վճարման ենթակա այլ գումարները, բացառությամբ ստացված վարկերից և փոխառություններից:

Կրեդիտորական պարտքերի ճանաչումը

Կրեդիտորական պարտքը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Կազմակերպությունը դառնում է գործարքի պայմանագրային կողմ, այսինքն՝ երբ առաջանում է պահանջի իրավունքը:

Կրեդիտորական պարտքերի սկզբնական չափումը

Կրեդիտորական պարտքը սկզբնական ճանաչման պահին չափվում է գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են կրեդիտորական պարտքի առաջացմանը):

Կրեդիտորական պարտքերի հետագա չափումը

Կարճաժամկետ կրեդիտորական պարտքերը սկզբնական ճանաչումից հետո չափվում են այն արժեքով, որով նրանք չափվել էին սկզբնական ճանաչման պահին:

Յուրքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ երկարաժամկետ կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը :

Կրեդիտորական պարտքերի ապաճանաչումը

Կրեդիտորական պարտքը (կամ կրեդիտորական պարտքի մի մասը) ապաճանաչվում է (դուրս է գրվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից) միայն այն դեպքում, երբ այն մարվել է, այսինքն՝ երբ պայմանագրով սահմանված պարտականությունը կատարվել է, չեղյալ է համարվել կամ ուժը կորցրել է (հայցային վաղեմության ժամկետը լրացել է):

Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվանցումը

Դեբիտորական պարտքը և կրեդիտորական պարտքը հաշվանցվում են (և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում է զուտ գումարով) այն դեպքերում, երբ Կազմակերպությունը՝

- 1) ունի ճանաչված գումարները հաշվանցելու անվերապահ կատարում ապահովող իրավունք, և
- 2) մտադիր է՝ կամ մարումն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

4. «ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ» և ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԻՑ ՀԱՍՈՒՅԹՆԵՐ

| ՀԱԶԱՐ ԴՐԱՄ | 2024թ. | 2023թ. |
|--|----------------|----------------|
| Պետական բյուջեից ֆինանսավորմամբ ծրագրերի իրականացումից հասույթ | 226,982 | 234,127 |
| Հաճախորդներին մատուցված ծառայություններից հասույթ | 1,500 | 40,335 |
| Բյուջեից բնամթերային ձևով պայմանագրով ստացված ամորտիզացվող ակտիվների գծով հասույթ | 7,083 | 6,539 |
| Կազմակերպություններից առանց պայմանների կատարման պահանջի(անհատույց) ստացված ակտիվների գծով հասույթ, | 10,710 | 3,771 |
| Արձակուրդի գծով պահուստի նվազում | | 800 |
| Չփոխանակվող գործարքներից պետական բյուջեի այլ հասույթներ | 936 | 693 |
| Ընդամենը | 247,211 | 286,265 |

5. ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

| ՀԱԶԱՐ ԴՐԱՄ | 2024թ. | 2023թ. |
|---------------------------------|-----------------|-----------------|
| Գրասենյակային ծախսեր | (3,257) | (3,669) |
| Բանկային և ապահովագրական ծախսեր | (59) | (71) |
| Կոմունալ ծախսեր | (7,225) | (6,447) |
| Հեռահաղորդակցության ծախսեր | (995) | (996) |
| Խորհրդատվական ծախսեր | (667) | (650) |
| Պահնորդական ծառայության ծախսեր | (4,485) | (3,863) |
| Ընդամենը | (16,688) | (15,696) |

6. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

| ՀԱԶԱՐ ԴՐԱՄ | 2024թ. | 2023թ. |
|--|-----------------|-----------------|
| Դատական կարգադրիչների, դատավորնորի, քննիչների հատուկ ուսուցում | (6,350) | (7,054) |
| Դատախազների, դատավորների, քննիչների վերապատրաստում | (4,304) | (3,522) |
| Ընդամենը | (10,624) | (10,576) |

7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

| ՀԱԶԱՐ ԴՐԱՄ | 2024թ. | 2023թ. |
|---|----------------|----------------|
| Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսեր | (3,457) | (2,869) |
| Չփոխհատուցվող հարկեր | - | (48) |
| Ծառայություններ | (558) | (1,665) |
| Այլ | (67) | (63) |
| Ընդամենը այլ եկամուտ/(ծախս) | (4,082) | (4,645) |

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

8. ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

| ՀԱԶԱՐ ԴՐԱՄ | 31.12.2024թ. | ԱՎԵԼԱՑՈՒՄ | ՀԱԿԱԴԱՐՁՈՒՄ | 01.01.2024թ. |
|------------------------------------|---------------|--------------|-------------|---------------|
| Չօգտագործված արձակուրդային պահուստ | 17,724 | 1,215 | | 16,509 |
| | 17,724 | 1,215 | | 16,509 |

| ՀԱԶԱՐ ԴՐԱՄ | 31.12.2023թ. | ԱՎԵԼԱՑՈՒՄ | ՀԱԿԱԴԱՐՁՈՒՄ | 01.01.2023թ. |
|------------------------------------|---------------|-----------|-------------|---------------|
| Չօգտագործված արձակուրդային պահուստ | 16,509 | - | 800 | 17,309 |
| | 16,509 | - | 800 | 17,309 |

9. ԱՅԼ ԵՎԱՄՈՒՑ

| ՀԱԶԱՐ ԴՐԱՄ | 2024թ. | 2023թ. |
|--|------------|------------|
| Տոկասային եկամուտ | 663 | 809 |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտ | - | 4 |
| Ընդամենը այլ եկամուտ | 663 | 813 |

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

10. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

| Հազար դրամ | Հողամասեր | Շենքեր, շինություններ | Մեքենաներ, սարքավորումներ | Փոխանցող հարմարանքներ | Տրանսպորտային միջոցներ | Արտադրատնտեսական գույք, գործիքներ | Այլ հիմնական միջոցներ | Ընդամենը |
|-------------------------------|-----------|-----------------------|---------------------------|-----------------------|------------------------|-----------------------------------|-----------------------|-----------|
| Սկզբնական արժեք | | | | | | | | |
| Մնացորդը 01 հունվարի 2023թ. | 198,000 | 828,637 | 91,845 | | 3,000 | 132,442 | 11,169 | 1,265,093 |
| Ավելացումներ | | | | | | 3,286 | | 3,286 |
| Օտարումներ | | | | | | | | - |
| Վերարդասակարգում | | | (90,392) | 276 | | 97,160 | (10,044) | (3,000) |
| Միայն ճշգրտում | | | (1,453) | | | | | (1,453) |
| Մնացորդը 31 դեկտեմբերի 2023թ. | 198,000 | 828,637 | - | 276 | 3,000 | 232,888 | 1,125 | 1,263,926 |
| Ավելացումներ | | | 665 | | 605 | 240 | 2 | 1,512 |
| Օտարումներ | | | | | | (1,222) | | (1,222) |
| Մնացորդը 31 դեկտեմբերի 2024թ. | 198,000 | 828,637 | 665 | 276 | 3,605 | 231,906 | 1,127 | 1,264,216 |
| Մաշվածություն և արժեզրկում | | | (64,043) | | | (106,817) | (5,002) | (221,357) |
| Մնացորդը 01 հունվարի 2023թ. | | (42,495) | | | (3,000) | (28,924) | (816) | (36,822) |
| Տարվա մաշվածությունը | | (7,082) | | | | | | |
| Օտարումներ | | | 62,778 | (88) | | (64,480) | 4,790 | 3,000 |
| Վերարդասակարգում | | | 1,265 | | | | | 1,265 |
| Միայն ճշգրտում | | | - | (88) | | (200,221) | (1,028) | (253,914) |
| Մնացորդը 31 դեկտեմբերի 2023թ. | | (49,577) | - | (88) | (3,000) | (10,786) | (97) | (18,346) |
| Տարվա մաշվածությունը | | (7,082) | | | (381) | | | |
| Վերարդասակարգում | | | (481) | | | 483 | (2) | - |
| Օտարումներ | | | | | | 695 | | 695 |
| Մնացորդը 31 դեկտեմբերի 2024թ. | | (56,659) | (481) | (88) | (3,381) | (209,829) | (1,127) | (271,565) |
| Հաշվեկշռային արժեք | | | | | | | | |
| Առ 31 դեկտեմբերի 2023թ. | 198,000 | 779,060 | - | 188 | - | 32,667 | 97 | 1,010,012 |
| Առ 31 դեկտեմբերի 2024թ. | 198,000 | 771,978 | 184 | 188 | 224 | 22,077 | - | 992,651 |

11-31 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

11. ՊԱՇԱՐՆԵՐ

| ՀԱԶԱՐ ԴՐԱՄ | 2024թ. | 2023թ. |
|----------------------------------|---------------|---------------|
| Նյութեր | 2,594 | 3,125 |
| Փոքրարժեք կամ արագամաշ առարկաներ | 538 | 649 |
| Շինանյութ | 1 | 2 |
| Այլ նյութեր | 801 | 892 |
| Ընդամենը | 3,934 | 4,668 |

Կազմակերպությունը փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշում է «Առաջին մուտք՝ առաջին ելք» (ՖԻՖՈ) բանաձևով, հաշվառումն իրականացնում է ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջին համապատասխան:

12. ԱՌԱՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

| ՀԱԶԱՐ ԴՐԱՄ | 2024թ. | 2023թ. |
|--|---------------|---------------|
| Դեբիտորական պարտքեր հաճախորդներին մատուցած ծառայությունների գծով | - | 3,150 |
| Տրված կանխավճարներ | 77 | 170 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 7,057 | 10,828 |
| Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով | - | 398 |
| Ընդամենը | 7,134 | 14,546 |

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Կազմակերպությունը լրիվ պահուստավորում է բոլոր այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնց մարման ժամկետից անցել է ավելի քան 365 օր, քանի որ, հիմնվելով անցյալի փորձի վրա, մարման ժամկետը 365 օրով գերազանցելու դեպքում առևտրային դեբիտորական պարտքերը համարվում են անհավաքագրելի:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

13. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

| ՀԱԶԱՐ ԴՐԱՄ | 2024թ. | 2023թ. |
|-------------------|---------------|---------------|
| Կանխիկ միջոցներ | 826 | 826 |
| Բանկային հաշիվներ | 1,769 | 1,082 |
| Ընդամենը | 2,595 | 1,908 |

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

14. ՀԵՏԱԶԳՎԱԾ ԵԿԱՄՈՒՏ

| | ԸՆԹԱՑԻԿ | |
|--|----------------|----------------|
| ՀԱԶԱՐ ԴՐԱՄ | 2024թ. | 2023թ. |
| Բյուջեից բնամթերային ձևով պայմանով ստացված այլ հիմնական միջոցների գծով հետաձգված եկամուտներ | 710,563 | 717,646 |
| Այլ կազմակերպություններից բնամթերային ձևով պայմանով ստացված մեքենաների և սարքավորումների գծով հետաձգված եկամուտներ | 19,700 | 30,410 |
| Ընդամենը | 730,263 | 748,056 |

15. ԱՌԱՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

| ՀԱԶԱՐ ԴՐԱՄ | 2024թ. | 2023թ. |
|-------------------------------------|---------------|---------------|
| Կրեդիտորական պարտքեր գնումների ձևով | 1,265 | 380 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին | - | 2,688 |
| Պարտքեր հարկերի և այլ վճարների գծով | 11,989 | 13,050 |
| Ընդամենը | 13,254 | 16,118 |

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Կազմակերպությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

20. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

Կազմակերպության կապակցված կողմերը ներառում են հիմնականում ղեկավար անձնակազմը, որոնց հետ իրականացված գործարքները ներկայացված են սորև.

| ՀԱԶԱՐ ԴՐԱՄ | 2024թ. | 2023թ. |
|---|---------------|---------------|
| Աշխատավարձ, ներառյալ սոցիալական ապահովության վճարները | 29,910 | 40,985 |
| Ընդամենը | 29,910 | 40,985 |

21. ՀԱՇՎԵՏՈՒ ԱՄՍԱԹՎԻՑ ՀԵՏՈՍ ԵՆԴԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԵՊՔԵՐ

Հաշվետու ամսաթվից հետո որևէ դեպք կամ գործարք տեղի չի ունեցել, որը կարող է նշանակալի լինել Կազմակերպության ֆինանսական վիճակի կամ ֆինանսական արդյունքի համար:

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ

ՌԵԿՏՈՐ՝

[Ստորագրություն] ԱՆՈՒՅԱՆՔԵՆՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝

[Ստորագրություն] ՀԱՍՄԻԳՂԱՅՐԱՊԵՏՅԱՆ

